Կազմված է 15.07.2019թ.
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՎԱՅԻՆ
ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

«15» հուլիսի 2019թ.

ՀԻՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝

Աննա Չուլյան

_____
(ստորագրություն)

Տպագրված է ընդամենը 2 օրինակ
Օրինակ - 1

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից՝
«__» ____2019 թվական
Գրանցման թիվ _____
Հարկ վճարողի հաշվառման համար
_____

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

_____/ _____
ստորագրություն անուն, ազգանուն

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՎԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Երևան-2019թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՎԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) հասարակական միավորման տեսակ է, որում իրենց շահերի ընդհանրության հիման վրա օրենքով սահմանված կարգով միավորվել են ֆիզիկական և /կամ իրավաբանական անձինք՝ իրենց ոչ կրոնական հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքները բավարարելու, իրենց և այլոց իրավունքներն ու շահերը պաշտպանելու, հանրօգուտ այլ գործունեություն իրականացնելու նպատակներով, ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:

1.2 Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենսդրության, այլ նորմատիվ իրավական ակտերի, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:

1.3 Կազմակերպության գործունեության սկզբունքներն են օրինականությունը, հրապարակայնությունը, խտրականության բացառումը, անդամության կամավորությունը, անդամների շահերի ընդհանրությունը, ինքնակառավարումը, իրավահավասարությունը, բարեխղճությունը և հաշվետվողականությունը:

1.4 Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: Կազմակերպությունը կարող է գործել արտասահմանյան երկրներում՝ այդ երկրների օրենսդրությանը համապատասխան՝ ստեղծելով առանձնացված ստորաբաժանումներ:

1.5 Կազմակերպության պաշտոնական լեզուն հայերենն է: Տարբեր լեզուներով գրված տեքստերի մեկնաբանությունից ծագած որևէ անհամապատասխանության դեպքում, հայերեն գրված տեքստը համարվում է որոշիչ:

1.6 Կազմակերպության լրիվ անվանումն է՝

1.6.1 հայերեն լեզվով լրիվ անվանումն է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՎԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ, կրճատ՝ «ՀԹԳԱ» ՀԿ,

1.6.2 ռուսերեն լեզվով լրիվ անվանումն է՝ «Ассоциация цифровых библиотек Армении», Общественная организация, կրճատ՝ “АЦБА” ОО,

1.6.3 անգլերեն լեզվով լրիվ անվանումն է՝ “Digital Library Association of Armenia” NGO, կրճատ՝ “DLAA” NGO:

1.7 Կազմակերպությունն ունի խորհրդանիշ, որը ուղղանկյուն պատկեր է: Դրա կենտրոնում սև ու սպիտակի համադրությամբ, լատինատառ մգեցված մեծատառերով գրված է «DLA» բառը: «D» տառից ձախ՝ ներքևից վերև երկայնքով, սև գույնով լատինատառ մգեցված տառերով գրված է «Armenia» բառը, որից միայն «A» տառը մեծատառ է, իսկ մնացած տառերը՝ փոքրատառ:

1.8 Կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում իր պետական գրանցման պահից, ունի հայերեն, անգլերեն, ռուսերեն լեզուներով կլոր կնիք, պաշտոնաթղթեր, հաշվարկային, ընթացիկ և այլ հաշիվներ բանկերում՝ ինչպես դրամով, այնպես էլ տարադրամով:

1.9 Կազմակերպությունն օգտվում է ՀՀ օրենսդրությամբ իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքներից և կրում է համապատասխան պարտականություններ:

1.10 Կազմակերպությունը համագործակցում է ինչպես ՀՀ պետական և ոչ պետական, արտասահմանյան և միջազգային կազմակերպությունների, այնպես էլ անհատ անձանց հետ:

1.11 Կազմակերպությունը կարող է անդամակցել միջազգային ոչ կառավարական և ոչ առևտրային կազմակերպությունների, կնքել համաձայնագրեր և պայմանագրեր օտարերկրյա ու միջազգային կազմակերպությունների հետ:

1.12 Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է հիմնել լրատվության միջոցներ, տեղեկատվություն տարածել իր գործունեության վերաբերյալ՝ զանգվածային լրատվության միջոցներով:

1.13 Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

1.14 Կազմակերպությունն օժտված է սույն Կանոնադրությամբ սահմանված իր գործունեության բոլոր տեսակների իրագործման համար անհրաժեշտ իրավունքներով և պարտականություններով՝ իր ստեղծման խնդիրներին և նպատակներին համապատասխան:

1.15 Կազմակերպությունը հանդիսանում է ոչ առևտրային կազմակերպություն և կարող է օգտագործել իր գույքը և միջոցները բացառապես կանոնադրական նպատակների իրագործման համար:

1.16 Կազմակերպությունն իր անունից կարող է ձեռք բերել գույքային և ոչ գույքային իրավունքներ և կրել պարտավորություններ, հանդես գալ որպես հայցվոր, պատասխանող՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

1.17 Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 24դ, հեռախոսահամարը՝ +37411300111 /309/; +37491511012, էլ. փոստի հասցեն՝ elca.armenia@gmail.com:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ:

2.1 Կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են.

2.1.1 աջակցել մասնակիցների աշխատանքի մակարդակի և օգտվողների սպասարկման որակի բարձրացմանը՝ ամեն տեսակի գիտական էլեկտրոնային-տեղեկատվական աղբյուրներից օգտվելու հնարավորության ընձեռնման շնորհիվ,

2.1.2 նպաստել մասնակիցների ընդհանուր գույքային շահերի ներկայացմանը և պաշտպանությանը էլեկտրոնային-տեղեկատվական աղբյուրներից օգտվելու հնարավորության և կազմակերպման գործում,

2.2.1 ապահովել մասնակիցների համար հետաքրքրություն ներկայացնող արտաքին տեղեկատվական էլեկտրոնային աղբյուրներից օգտվելու հնարավորության աջակցություն (բաժանորդագրություն).

2.2.2 ցուցաբերել մասնակիցների կողմից սեփական (ներքին), այդ թվում բաշխված և համապետական, էլեկտրոնային աղբյուրների (վիրտուալ գրադարանների) ստեղծման, պահպանման և զարգացման գործում համապատասխան աջակցություն,

2.2.3 իրականացնել Կազմակերպության գործունեության նպատակների իրագործմանն ուղղված մարքետինգային, սոցիոլոգիական, գիտական և այլ հետազոտությունների մշակում, ներառյալ տեխնոլոգիական, կազմակերպչական, նորարարական մոտեցումները,

2.2.4 աջակցել Հայաստանի գիտությանը՝ տեղեկատվական աջակցության տրամադրում, առաջավոր գիտահետազոտական մշակումների, նոր տեխնոլոգիաների ներդրման սատարում,

2.2.5 աջակցել Հայաստանում բարձրագույն կրթության արդիականացմանն՝ ուսուցման էլեկտրոնային նորարարական մեթոդների, սեմինարների, սիմպոզիումների, գիտաժողովների, մանկավարժական կադրերի վերապատրաստման արդյունավետ մոդելների մշակման, ինչպես նաև Հայաստանում առաջատար տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման միջոցով,

2.2.6 նպաստել ազգային և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությանը, որոնց գործունեությունը կապված է տեղեկատվության տրամադրման հետ,

2.2.7 նպաստել էլեկտրոնային տեղեկատվական ծառայությունների ստեղծման, օգտվողներին տեղեկատվության տրամադրման և վիրտուալ գրադարանների գործարկման փորձի տարածմանը,

2.2.8 ապահովել մասնագիտական աջակցության տրամադրում այլ կազմակերպություններին և մասնավոր անձանց:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ, ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄԻՆ ՀԵՌԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ:

3.1 Կազմակերպության անդամ կարող են լինել գրադարանները, գիտահետազոտական կազմակերպությունները, լաբորատորիաները, միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատությունները և այլ ոչ առևտրային կազմակերպությունները:

3.2 Կազմակերպության անդամ կարող է դառնալ 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև օտարերկրյա ցանկացած քաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ, ինչպես նաև Կազմակերպության անդամ դառնալու իրավունք ունեցող ցանկացած իրավաբանական անձ, որը ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը և ընդունում է Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված դրույթները:

3.3 Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը գրավոր դիմում է Կազմակերպության գործադիր մարմնին:

3.4 Իրավաբանական անձը ընդունվում է Կազմակերպության անդամ և դուրս է գալիս Կազմակերպության անդամությունից իր իրավասու մարմնի որոշմամբ:

3.5 Կազմակերպության անդամության մեջ ընդունելու հարցը լուծում է գործադիր մարմինը:

3.6 Կազմակերպությանն անդամագրված անձն ազատ է դուրս գալու Կազմակերպությունից: Կազմակերպության անդամությունից դուրս գալը կատարվում է տվյալ անդամի գրավոր դիմումի հիման վրա գործադիր մարմնի որոշմամբ:

3.7 Կազմակերպության անդամի հեռացումը տեղի է ունենում գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ:

3.8 Կազմակերպության այն անդամը, ով պարբերաբար խախտում է սույն կանոնադրությամբ նախատեսված դրույթները, կարող է հեռացվել Կազմակերպության անդամությունից: Վերստին անդամագրումը կատարվում է ընդհանուր հիմունքներով:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

4.1.1 Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով ընտրելու և ընտրվելու Կազմակերպության կառավարման մարմիններում,

4.1.2 ներկա լինելու Ժողովին անձամբ, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նաև լիազորված անձի միջոցով,

4.1.3 Կազմակերպության գործադիր մարմնի կողմից սահմանված դեպքերում և կարգով անվճար օգտվելու նրա աջակցությունից,

4.1.4 ծանոթանալու Կազմակերպության մարմինների արձանագրություններին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները,

4.1.5 վերադասության կամ դատական կարգով բողոքարկել Կազմակերպության մարմինների որոշումները: Կազմակերպության մարմինների որոշումների բողոքարկումն անդամների կողմից իրականացվում է վերադասության կարգով: Անդամի կողմից բողոքարկումն իրականացվում է դիմում ներկայացնելու եղանակով: Դիմումը քննարկում է ընդհանուր ժողովը: Դիմումի քննարկումը կարող է կատարվել նաև հեռակա կարգով,

4.1.6 իրականացնել օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ:

4.2 Կազմակերպության անդամը պարտավոր է՝

4.2.1 կատարել Կազմակերպության կանոնադրական պահանջները և կառավարման մարմինների որոշումները,

4.2.2 բարեխղճորեն կատարել կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները,

4.2.3 վճարել անդամավճար գործադիր մարմնի կողմից սահմանված կարգով և չափով:

4.2.4 Կազմակերպության կանոնադրությունը խախտող կամ իր պարտականությունները չկատարող անդամի նկատմամբ գործադիր մարմնի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ նկատողություն, Կազմակերպության անդամությունից հեռացում:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

5.1 Կազմակերպությունն իր կանոնադրության նպատակներին համապատասխան իրավունք ունի՝

5.1.1 իր անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող,

5.1.2 բացելու բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով,

5.1.3 ստեղծելու այլ կազմակերպություն կամ լինելու նրա մասնակից,

5.1.4 ստեղծելու առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ,

5.1.5 տեղեկատվություն տարածելու իր գործունեության մասին, հիմնադրելու լրատվության միջոցներ,

5.1.6 կազմակերպելու և անցկացնելու խաղաղ, առանց զենքի հավաքներ,

5.1.7 օրենքով սահմանված կարգով ներկայացնելու ու պաշտպանելու իր և իր անդամների, շահառուների և կամավորների իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում,

5.1.8 համագործակցելու այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային կամ օտարերկրյա կազմակերպությունների հետ, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծելու Կազմակերպություն կամ անդամակցելու նրանց ստեղծած Կազմակերպությանը՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը,

5.1.9 կատարելու օրենքով չարգելված այլ գործողություններ:

5.2 Կազմակերպությունը պարտավոր է՝

5.2.1 վարել իր անդամների և կամավորների հաշվառումը,

5.2.2 «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքում ենթարկվել պարտադիր աուդիտի,

5.2.3 պաշտոնական կայքի առկայության դեպքում հասցեի վերաբերյալ ծանուցել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը,

5.2.4 «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարումը ստուգելու համար Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Լիազոր մարմին) պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել իր կառավարման մարմինների որոշումների պատճենները կամ գործունեության մասին այլ փաստաթղթեր,

5.2.5 Կազմակերպության անդամի պահանջով ոչ ավելի, քան պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալու Կազմակերպության կանոնադրությանը, հիմնադիր այլ փաստաթղթերի, ժողովի որոշումներին կամ տրամադրել դիմողին թղթային կամ էլեկտրոնային եղանակով՝ պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Սույն կետում նշված տեղեկությունները, փաստաթղթերը տրամադրելու համար կարող է գանձվել վճար, որը չի կարող գերազանցել դրանք տրամադրելու համար կատարված ծախսերը,

5.2.6 Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, ինչպես նաև վերակազմակերպման կամ լուծարման դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով դիմել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն,

5.2.7 իր գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները ներկայացնել Կազմակերպության գործադիր մարմնի հաստատմանը՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնությունը,

5.2.8 կատարել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

5.3 Կազմակերպության մարմինները նրա անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամտորեն՝ ի շահ Կազմակերպության:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ:

6.1 Կազմակերպության կառավարման մարմիններն են՝ ժողովը և գործադիր մարմինը՝ նախագահը:

6.2 Կազմակերպության գործունեության և կառավարման ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը պատկանում է Կազմակերպության բարձրագույն մարմնին՝ ժողովին:

6.3 Կազմակերպության հերթական ժողովը հրավիրվում է հինգ տարին մեկ անգամ: Կազմակերպության հերթական ժողովը հրավիրում է գործադիր մարմինը՝ անդամների համատեղ հավաքի ձևով կամ եթե դա հնարավոր չէ, ապա հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ՝ կազմելով համապատասխան արձանագրություն: Գործադիր մարմինը որոշում է ժողովի անցկացման օրը, ժամը և տեղը, ինչպես նաև ժողովի օրակարգի նախնական տարբերակը և այդ մասին ոչ ուշ քան 20 օր առաջ պատվիրված նամակով, կամ էլեկտրոնային եղանակով կամ զանգվածային լրատվության միջոցներով կամ օրենքով սահմանված այլ եղանակներով ծանուցում է կազմակերպության անդամներին և կառույցներին:

6.4 Կազմակերպության արտահերթ Ժողով հրավիրվում է գործադիր մարմնի նախաձեռնությամբ կամ Կազմակերպության անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ:

6.5 Կազմակերպության արտահերթ Ժողովը գումարվում է վերոնշյալ նախաձեռնությունից ոչ ուշ, քան 5 օրվա ընթացքում: Արտահերթ Ժողով գումարելու ժամանակի և վայրի մասին Ժողովի մասնակիցները ծանուցվում են արտահերթ Ժողով անցկացնելու օրվանից 5 օր առաջ:

6.6 Ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝

- **6.6.1** Կազմակերպության կանոնադրության հաստատումը, փոփոխումը, լրացումներ կատարելը և նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը,
- **6.6.2** Կազմակերպության գործադիր մարմնի ընտրությունը, փոփոխումը և լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
- **6.6.3** Կազմակերպության լուծարման (բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի) և վերակազմակերպման մասին որոշմների ընդունումը,
- **6.6.4** Այլ իրավաբանական անձ, կամ այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին որոշման ընդունումը,
- **6.6.5** Կազմակերպության կառուցվածքի հաստատումը,
- **6.6.6** Կազմակերպության մարմինների իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողության դադարեցումը:

6.7 Ժողովի իրավասության հարցերի մեջ են մտնում նաև՝

- **6.7.1** Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին որոշումների ընդունումը,
- **6.7.2** Կազմակերպության գործադիր մարմնի վարձատրություն սահմանված լինելու դեպքում վարձատրության կարգի և պայմանների սահմանումը,
- **6.7.3** 5 տարին մեկ անգամ հաստատել գործադիր մարմնի կողմից Ժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները,
- **6.7.4** Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի ընտրությունը, եթե օրենքի համաձայն կազմակերպությունը ենթակա է աուդիտի,

6.7.5 Օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

6.8 Ժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ ընդունել, եթե նրան մասնակցում են Կազմակերպության բոլոր անդամների կեսից ավելին: Կազմակերպության բարձրագույն մարմնի (ժողովի) բացառիկ իրավասությանը ենթակա հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են, եթե կողմ են քվեարկել Կազմակերպության բոլոր անդամների կամ բոլոր պատվիրակների թվի 2/3-ից ավելին: Մնացած հարցերով որոշումներն ընդունվում են ժողովի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:

6.9 Կազմակերպության գործադիր մարմինը կազմակերպության նախագահն է.

6.10 Գործադիր մարմինը Կազմակերպության կանոնադրությանը և Ժողովի որոշումներին համապատասխան՝

6.10.1 ապահովում է Ժողովի որոշումների կատարումը,

6.10.2 մինչև հինգ միլիոն դրամ արժողությամբ ցանկացած գույք միանձնյա, իսկ հինգ միլիոնից ավելի արժողությամբ ցանկացած գույք ժողովի հետ համաձայնեցնելով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Կազմակերպության անունից,

6.10.3 ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,

6.10.4 տալիս է լիազորագրեր,

6.10.5 բանկերում բացում է Կազմակերպության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ,

6.10.6 իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

6.10.7 հաստատում է կազմակերպության հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը,

6.10.8 ընդունում է Կազմակերպության անդամ և հեռացնում է Կազմակերպության անդամությունից,

6.10.9 հաստատում է Ժողովի գումարմանը նախորդող տարիների Կազմակերպության, ինչպես նաև նրա մարմինների գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները, որոնք առնվազն 5 տարին մեկ անգամ ներկայացնում է Ժողովի հաստատմանը,

6.10.10 հաստատում է Կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները,

6.10.11 իրականացնում է օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

6.11 Գործադիր մարմինն իր լիազորություններն իրականացնելիս Կազմակերպության անունից հանդես է գալիս առանց լիազորագրի:

6.12 Գործադիր մարմինը կրում է օրենքով նախատեսված պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, Կազմակերպության կանոնադրության, Ժողովի որոշումների կամ կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ, ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ:

7.1 Կազմակերպության նյութական և դրամական միջոցները գոյանում են մուտքավճարներից, անդամավճարներից, տնտեսական ընկերությունների, տեղական, օտարերկրյա և միջազգային կազմակերպությունների, անհատ քաղաքացիների կողմից ստացվող նվիրաբերություններից, այդ թվում՝ դրամաշնորհներից և նվիրատվություններից, կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցներից, դրամական մուտքերը պետական բյուջեից, իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ կազմակերպություններից ստացված միջոցները, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

7.2 Կազմակերպությանը սեփականության իրավունքով կարող են պատկանել ՀՀ օրենսդրությամբ չարգելված սեփականության իրավունքի ցանկացած օբյեկտ: Կազմակերպությանը պատկանող գույքը օգտագործվում է իր կանոնադրական նպատակների ու խնդիրների իրականացման համար:

7.3 Կազմակերպության ղեկավար մարմիններում ընդգրկված անձինք (բացառությամբ Կազմակերպության նախագահի) Կազմակերպության կողմից կարող են վարձատրվել Կազմակերպության նախագահի կողմից սահմանված կարգով:

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ:

8.1. Կազմակերպությունը կարող է լուծարվել ժողովի կամ դատարանի որոշմամբ:

8.2. Ժողովը կազմավորում է լուծարման հանձնաժողով և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները: Կազմակերպության լուծարման ավարտին լուծարման հանձնաժողովը, պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո, մնացած գույքը, ժողովի որոշմամբ սահմանված կարգով, օգտագործում է Կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, իսկ եթե դա հնարավոր չէ՝ փոխանցում է պետական բյուջե:

8.3. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել ժողովի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԻ ՊԱՏԿԵՐԸ

Սույն կանոնադրությունը կազմված է 15.07.2019 թ. և բաղկացած է «10» թերթից: